

Սաթե Հովակիմյան

ԹԵՐԱ-ԿՂԶԻ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԵՐԵՎԱՆ



2017

ՀՏԴ 821.19-32 Հովակիմյան

ԳՄԴ 84 (5Հ)-44

Հ 843

**Հրատարակվել է ՀՀ մշակույթի նախարարության
աջակցությամբ**

Խմբագիր՝ Արմեն Ավանեսյան

Հովակիմյան Սաթե

**Հ 843 Թերա-կղզի: Պատմվածքներ / Ս. Հովակիմ-
յան. - Եր.: Արմավ, 2017. - 128 էջ:**

Սաթե Հովակիմյանի պատմվածքներն աչքի են ընկնում պատումի թարմությամբ. ասելիքը արդիական է, հերոսը՝ ժամանակակից մարդը: Հեղինակի առաջին գիրքն է:

ՀՏԴ 821.19-32 Հովակիմյան

ԳՄԴ 84 (5Հ)-44

ISBN 978-9939-863-56-6

© Հովակիմյան Սաթե, 2017

© «Արմավ», 2017

ՄԱՐԴԸ՝ ԹԵՐԱ-ԿՂԶԻ

Գրականությունը բազմաթիվ հնարավորություններ է ընձեռում կյանքի, իրականության և ժամանակի նկարագիրը պատկերել խոսքի կառուցման տարաբնույթ արտահայտչաձևերով: Այդ արտահայտչաձևերն անընդհատ թարմացվում են գրողների կողմից: Գրողներ կան, որոնք շեշտը դնում են ասելիքի ուժգնության վրա, գրողներ կան, որոնք ավելի շուտ կարևորում են տեքստային լուծումներն ու բնագրի ստեղծումը: Սակայն, ամեն դեպքում, կարևոր է, որ գրականության առանցքում լինի մարդը:

2016 թվականից գրական մամուլում երևացին Սաթե Հովակիմյանի պատմվածքները, որոնցում հատկապես տեսանելի է հեղինակի տեքստ կառուցելու ջանքը: Եվ ահա, արդեն ընթերցողի սեղանին է դրվում գրողի պատմվածքների անդրանիկ՝ «Թերա-կղզի» վերնագրով ժողովածուն: Սաթեի պատմվածքների մեծ մասը ներքին մեկախոսական կառուցումներ ունեն: Հեղինակը փորձում է հոգեբանական արձակ ստեղծել, որը մեծավ մասամբ հաջողվում է նրան: Նման կերպ ստեղծագործողն արտահայտում է իր և կյանքի յուրովի փոխհարաբերությունը: Կենսական յուրաքանչյուր դրվագ, իրողություն կամ իրավիճակ գրողի համար ազդակ են հանդիսանում ինքնաարտահայտման. «35,5 չափի լաքե ոտնամաններիս վրա աչքերիցս նետվող ինքնասպան ողորմելի արցունքներ: Կողքից լիքը մարդիկ՝ անտարբեր, կանգառում սպասող, իրենց երթուղայինի հասնելու համար հարբած պարսկական փղերի պես քեզ ոտնատակ անելու պատրաստ, տուն շտապող հաստաքամակ կնիկներ: Վազե՛ք, անհամբերներ, կարծատեսներ, անտարբերներ, վազե՛ք...» (էջ 55):

Սաթե Հովակիմյանն այսպես դրամատուրգիական բախում է ստեղծում՝ մարդու և կյանքի անհամատեղելիության: Մարդն

անընդհատ նոր փնտրտուքների մեջ է, սակայն կյանքն իր տրամաբանությունն ունի, որը հաճախ թելադրվում է հանուրի կողմից:

Մենախոսությունը դառնում է դիմադրություն և այդ դիմադրությունը միայն ես-ի վերարտադրմամբ չէ, որ արտահայտում է Սաթե Հովակիմյանը: Նրա հերոսներից մեծ մասի ներքին դրաման պատկերվում է նույն՝ ներանձնային-հոգեբանական մենախոսության ձևով:

Դիպաշարի զարգացումները պատմվածքներում հիմնականում այն արտաքին պլանն են ապահովում, որի շնորհիվ պետք է բացահայտվի այսօրվա մարդու հոգեբանական հղումները:

Այսպես, «Թերա-կղզի» պատմվածքում տեքստն իրենից ներկայացնում է երեք ներքին մենախոսություն՝ դռնապանի, սիրեկանի և հոգեբանի. կյանքի և իրականության ընկալումը դիմադարձվում է մտքի հոսքով. «Քարն... Չնայած մուգ ապակիներով ինձ չես տեսի, բայց ես քեզ հո լավ եմ տեսնում: Լավն ես, լավը, հերիք է շրթունքներդ տարուբերես, ոնց որ շրթներկն ու սոսինձը շփոթած լինես: Ըհը, էդպես էլ կարծում էի: Էս թանկարժեք մեքենայից իջնող տիկինը կարծես մեզ մոտ է գալիս: Դե, դե... տասից տասը: Ինչ էլ գործնական տեսք ունես: Զբոսաշրջիկ չես լինի, քեզից գործարար դուրս չէր գա, քսանյոթ տարվա աշխատանքային փորձս վկա» (էջ 83):

Երիտասարդ արձակագիրն ունի կադրային մտածողություն և պատումը հիմնականում ընթանում է դրվագ-կադրերի անցումների ձևով: Անգամ հերոսների պատում-մենախոսությունները միտք-կադր անցումներով են երևում: Այսինքն, գրողի համար կարևոր է դառնում **տեսապատկերը**: Փաստորեն ստեղծվում է գրականություն-կինո փոխադարձ մի կապ, որտեղ, ըստ հեղինակի՝ գրականությունը դառնում է շարժանկար, իսկ կինոն՝ ստեղծվում է խոսքի և գրական հենքի հիման վրա:



Պատահական չէ, որ մի շարք պատմվածքներ՝ «Ռեպորտաժներ Բերմուդյան եռանկյունուց», «Թերա-կղզի», «Վտանգավոր կապեր», «Աստոնիո» և այլն սցենար կամ հեռուստառեպորտաժներ են հիշեցնում. «Տուփ-սենյակ, գույների ու կրքերի խառնարան, որտեղ ամեն գիշեր, ներկամաններից սողում են կարմիր, դեղին, կապույտ, կանաչ՝ վրձնի հպումներից հալվելու պատրաստ ու կտավին սիրո պոռթկումների եզերագիծը թողնող յուղաներկերը: Տարածքով մեկ գնում-գալիս է Պանի պես կենսախինդ ու չարածճի հայացքով, քառասունն անց, միշտ տարեց ու միշտ ջահել, կապուտաչ Ռուբենը: Միջառասակ, կարծես Սեզանի նատյուրմորտներից իջած, տանձածն, փոքրիկ էրկարավուն հողագույն դեմքով, խաղողի ոստերի նման հանգուցավոր մատներով, ճախ ափի մեջ ասես ծնվելու պահից ցայսօր տունձված է անձնագոհ լայնիրան, երկարավուն ոտիկի վրա ցցված, կենարար արևագույնով լցված գինու գավաթը, իսկ կանաչ բազմոցին դեղձանիկի նման թառել է երեսնամյա կարմրայտ Շաքեն» (էջ 99):

Նման կերպ հեղինակ-հերոսն ընտրում է իրեն հարմար դիրքը և դառնում տեսանող՝ բաց դռնից, պատուհանից, պատշգամբից, կանգառում սպասելիս դիտում է իր շուրջը: Մի խոսքով իրականությունը դառնում է մի մեծ բեմ-հրապարակ, որն ունի իր միակ հանդիսատեսը՝ մենակված, թերակղզու վերածված մարդը: Մարդուն չի կղզիացնում երիտասարդ գրողը, քանզի մարդուն տրված չէ լիարժեք կղզիանալու երջանկությունը և կյանքի, իրականության հետ կապը նրան դարձնում են **թերի**:

Սաթե Հովակիմյանի այդ թերի հերոսները օտարված, մենակության մատուցված, կյանքի լուսանցքում հայտնված մարդիկ են: Օրիորդ Զաբելը, Սոնիկը, Անդոն, Քառասուներեքամյա աղջիկ Նյուտան, մանկագիր Ալվարդ Մանուկյանը, բուսաբան Սմբատ Գրիգորևիչն ու օպերային երգչուհի Ադա Գուրգենովնան, և մյուս կերպարները տանում են հեղինակի ես-ի



բացահայտմանը: Պատահական չէ, որ մի շարք պատմվածքներում՝ «Վերջին ևորոգում», «Երկու Հայկերի միջև», «Ռեպորտաժներ Բերմոնդյան եռանկյունուց» և այլն, հեղինակը պատմում է առաջին դեմքով և ինքն էլ դառնում գործողության մասնակից, իսկ գրքի համանուն՝ «Թերա-կղզի» պատմվածքում հերոսներն են պատմում առաջին դեմքով: Սա հատուկ հնարանք է հեղինակի կողմից՝ ինքն իր հերոսների հետ նույնանալու և բնական է, ինքն իր ես-ից հեռանալու համար:

Պատմվածքներում հեղինակի կերպն արտահայտվում է երեք պայմանաձևերով՝ իբրև մասնակից, իբրև տեսանող և իբրև «դիրիժոր»:

Տեսանող հեղինակը ևս մասնակցում է գործողություններին, բայց որպես վկա-ականատես: Այս դեպքում պատումը դառնում է ավելի զուսպ, իսկ գործողություններն ունենում են հորիզոնական զարգացում:

Մասնակից հեղինակը ներքին մենախոսության կրողն է, և այս դեպքում պատումը դառնում է անվերահսկելի հոսք, իսկ գործողությունները զարգանում են ավելի շատ ուղղահայաց ընթացքով:

Ամենահետաքրքիրը «դիրիժոր» հեղինակն է: Այս պարագայում Սաթե Հովահիմյանը ստեղծում է շարժանկարին բնորոշ տեքստ, որտեղ հեղինակը չի երևում, բայց առկա է, թելադրողն է: Տեքստային խաղարկումներն են ստեղծվում, գրողը կարող է ստեղծել խոշար պլան, ժամանակը հետ ու առաջ անել, կանգնեցնել կադրը, իրար կողքի նստեցնել Երոֆենին, Վարդգես Պետրոսյանին ու Այլիսլիին, հեռուստառեպորտաժին մասնակից դառնալ և այլն: Այս նորարարությունները Սաթե Հովակիմյանի տեքստում հաջողված են, և առիթ են տալիս հուսալու նոր զարգացումներ՝ գրողի հետագա ստեղծագործություններում:

Արմեն Ավանեսյան



ԶԱՌԵՐ՝ ԳՐԱՆԻՏԻ ՎՐԱ

«Շեշ-բեշ», «դու-բարա», «իքիբիր»... Ամռան տապը անզոր ու թոթովախոս է բակի տղամարդկանց ամենօրյա սիրելի զբաղմունքի՝ նարդու «առաջնության» թեժ գոռում-գոչունի դիմաց:

«Սեյ բայ դու», «շեշ ու դու»... փայտե խաղատախտակն անհանգիստ է: Սև-սպիտակ, լուսադեմից մինչև ուշ երեկո մարտնչող ռազմիկներն անվերջ գնում-գալիս են: Խալերով պատված զառերը նոր քայլեր են թելադրում, դեմ դիմաց գտնվող կարճիկ ու երկարավուն մատները փոխադարձ ման-յովրեր են իրականացնում:

- Է՛հ, Անդո, հեսա ջարդդ տալու եմ, հոգիս կերար, հա՛:

- Հա՛, ուստա ջան, ո՞նց կասես, բայց սպասիր, էս քեզ «բեշ դորդ», դե հիմա ջարդս տուր:

- Բերանս ցամաքեց, պուպուլակը դատարկեմ, գամ, տես ո՞նց եմ տալու...

Բակի տղամարդիկ լիաթոք ծիծաղում են, աշխարհի լավագույն բակի, նարդու լավագույն վարպետներն իրար հանգիստ չեն տալիս, մեկ-մեկ քթանցքներով կլանում են տանտիկինների պատրաստած կոտլետների ու մեծ կաթսաների մեջ եփվող մուրաբաների՝ բակով մեկ տարածվող բույրերը, համարյա հանձնվում են, ուզում են թողնել «կովադաշտը», շուտ տուն բարձրանալ, բայց հերթական «դորդ ջհարն» ու «շեշ ու բեշը» սթափեցնում են, ավելի ամուր գամում խաղատախտակին:

- Ըհը՛, հիմա սառը սրտով, գալիս եմ քեզ կրելու, Անդո ախպեր: Ասա, պսակվեիր, երեխեքիդ հետ զբաղվեիր, չէ՛, ամբողջ օրը նարդու զառ ես գցում:

- Չեղավ, ուստա ջան, մենակ ես եմ աչքիդ երևու՛մ:

- Բա էլ ո՞վ, ուր որ ա քառասունամյակդ ենք նշելու, էս էլ քեզ «փանջ ու դու», իմը հենա, թոռներս են վազվզում, երեխեքս կողքս, Տիկոս զանգում, թե պապ, սպասի թոռդ ուզում ա խոսել: Էն էլ թե `«папик, привет, вор гам Хайастан, индз хет кхахас?»:

- Ես էլ ասում եմ՝ տո ես քո հոր դարդը, Հայաստանից կտրեց տարավ...էհ, կտրողի...

Ու խաղաքարը Օնիկ պապի Աշոտիկին երկրից կտրողի ցավից վեր է թռնում ու մոնչալով մտնում փայտե կամարի տակ:

- Ասա՞ս ի՞նչ ա, որ երկար-բարակ մտածելուդ վախտերն անցել են, ախպեր, քեզ պսակելու ենք, պրծնի, գնա: Բա կողքիդ մի սենց լոյսի պես տղա չունենամ: Վաղո՛ ջան, հլը թոփ մեր տուն, Անիկին ասա ակնոցս տա, ջղայնացա, աչքերս ինձնից խոռվեցին:

- Ի՞ի, էլի ես եմ մեղավոր:

- Բա հո ես չե՞: Ես երեխեքը թող լավ լսեն, որ վաղը, մյուս օրը քեզ հիշելով՝ իրանց գործը բախտի վրա չգցեն: Ըհը՛, էս էլ, «դու շեշ»:

Խաղացողների շուրջբոլորը հավաքվել են ամառային արձակուրդը անշտապ վայելող ու արագ տղամարդանալ ցանկացող դեռահասները, որոնք դեռևս աննշան, բայց կարևոր՝ վարպետների խաղը նայելով սովորելու ու մտովի քայլեր կատարելու իրավասություն ունեն:

Տղամարդկանց է մոտենում գունատված, իրեն հազիվ ուղղահայաց դիրքում պահող Վաղոն: Բոլորի հայացքներն անմիջապես ուղղվում են դեպի երիտասարդը, որի ձեռքը պատյան է դարձել Օնիկ պապի ակնոցի համար: Ափի միջից ոչ մի կերպ դուրս գալ չի ուզում ծաք տված ապակիով, Վաղոյի մատնահետքերով պատված ծերուկ ակնոցը:



-Ասում են՝ վրա են տվել, պատերազմ ա, Օնի՛կ պապ, Անիկ տատն ասում ա տուն գնաս:

- Է՛հ, այ բալա, ո՞վ ա վրա տվել, Անի՛կս, հա էդ կնիկը տենց էլ չփոխվեց, բայց Անդո դու դրանից չառիթավորվես, Անիկիս ցավը տանեն: Այ բալա, ակնոցս տուր, տուր դե, վա՛յ: Արևը գլխին ա տվել, հե՛հե՛, գնա, մեղրաջուր խմի, պառկի:

- Օնի՛կ պապ... Իսկական պատերազմ, ոնց հերս պատմում էր էն ժամանակ...

- Է՛հ, ջղայնացնում ես: Կարո՞ղ ա ռազմաձակատ գնաս: Մեզ պաշտպանելուց դեռ մի երկու ամիս ունես, գնա, զինվո՛ր, գնա: Քո պատճառով էս կարևոր գործը թողել, տես ի՞նչով ենք տարվել:

Բջջային հեռախոսները, իրար հաջորդելով, սկսեցին ձիչ արծակել, շենքի պատուհանները լեղապատառ եղան ու փակեցին բերանները: Արևի այլայլված դեմքը փորձեց ծածկվել տեղ-տեղ ոմբակոծված ամպերով, երկնքում յոթ կողպեքի տակ պահվեց անձրևը, անձրևագրի գործառույթն իրենցով արեցին գունագեղ զգեստները սևով փոխարինած քույրերը, մայրերն ու աղջիկները:

Բակը քչախոս է դարձել, բակում իրենց առօրյան նարդու խաղատախտակի շուրջը կազմակերպած տղամարդիկ օր օրի պակասում են: Հսկա նշատախտակի վրա անխնա պտույտ է գործում պատերազմի հրեշավոր սլաքը՝ իր հետևից ջնջելով քանի-քանի նորածիլ կյանքեր:

Արշուն էլ գնաց, Սեթոն էլ, Գագոն էլ, Կարոն էլ՝ խաղաղաշտը որոշեցին փոխարինել մարտաղաշտով ու տնեցիներից թաքուն, կամավոր մեկնեցին ռազմաձակատ:

- Անդո՛ր ախպեր, չմտածես, զառդ գցի, հաղթելու ենք, էստեղ չէ, իսկական պատերազմում,- ծխախոտի ծխից ապխ-

տած բեղերը ոլորում է Օնիկն ու հազիվհազ ժպտում՝ կնձիռնե-րով շրջանակված անփայլ մալախիտե աչքերով:

- Հա, Օնիկ պապ, դու ինձնից լավ կիմանաս: Արամն էլ գնաց, հա՛:

- Հա, գնաց, ասեց, թե մորս, կնկանս, երեխեքիս գլխին մնա, ես գնամ կովեմ ու հետ գամ: Է՛հ, երանի չէր, ամեն ինչ սենց արագ-արագ անեինք ու պրծներ-գնար: Անդո ախպե՛ր, հետ արի, համ դիմացս ես, համ էլ Աստված գիտի՝ ո՞ր ես:

«Ո՞ր էիր Աստված, երբ խենթացավ լքված մի ողջ ժողովուրդ», ո՞ր ես Աստված, երբ հիմա նորից հատվում են հաստաբուն ծառի նորաբողբոջ շիվերը: Տղաները հերոս են, հե-րոսները լեելու գինը գիտեն, մայրերը ամեն ինչ կտային, միայն թե ընդհատվեր այդ լուռությունը, միայն թե «հերոս» բառն իր իմաստի հետ միասին մտներ «Պանդորայի արկղի» մեջ ու այլևս դուրս չգար, գիշատչի պես չըրջեր եռագույնով պատ-ված արկղերի շուրջ բոլորը:

Քարե գորգը փովել է մինչ անմահություն, այնտեղ, ուր կողք կողքի պառկածների լուռությունն ավելի խոսուն է, քան ցանկացած ձառ ու աղաղակ: Սառնաշունչ տապանաքարից ջերմագին ժպտում է խոսուն մի հայացք՝ ջահել, բեկված երա-զանքներով... Մի հսկայակերտ թիկունք դրդում է ու ընդհա-տում անձայնության լիարժեքությունը: Այդժամ արնագույն մե-խակները գգվում են քարին, բայց քարը մեծ է, ծանր, ան-սիրտ...

- Ապե՛ր, ի՞նչ արեցիր, ապեր, խելա՛՞ռ տղա:

Հսկայակերտ թիկունքը դրդում է, հսկա ոտքերը ծնկել են, խոշոր ձեռքերը մի կերպ են պահում վզին ենթարկվել չկա-մեցող գլուխը:

Բակն անվերջ ոռնում է, բակն այսպես զարդարվել չէր ու-գում, բակում ամեն մուտքի առջև անթիվ ծաղկեպսկաներ են

հսկում, գլուխդ վեր ես բարձրացնում՝ երկնքի երկայնքով ձգվում եմ սև ժապավեններին դաջված տառերը, ներքև ես նայում գլխիվայր կախվել, ողբում եմ սգակիր փետրաթերթ ծաղիկները...

Անդոն տանը տեղը չի գտնում, եղբորը հագիվ է խնդրում, որ դեռ համբերի, դեռ չգնա, ախր երկու երեխաներին, կնոջը ո՞նց թողնի, ինքը գոնե չոր գլուխ է, կորցնելիք չունի, դեռ համբերել է պետք, միգուցե մի երկու օրից դրսում մեր ճակատագիրը որոշողները ուշքի գան, գուցե հրաշքով բուժվեն դարավոր քնախտից...

Բակում մնացին երկուսով՝ Անդոն ու Վաղոն, Օսիկ պապն էլ որոշեց, որ իր տեղը տղայի կողքին է, տանը, կանանց հետ, հեռուստացույցի առջև գամված, անվերջ սպասման մեջ մնալով, ոչինչ չի փոխվի, իսկ փոխել պետք է: Հրաժեշտի ժամանակ էլ չկար: Օդի եռմանը փխրեցնում էր ասֆալտը, պուպուլակն անզուսպ փղծկում էր, Վաղոն ու Անդոն դեմ դիմաց նստած, բայց ասես իրար չէին էլ նկատում: Նարդու խաղատախտակը, ինչպես շաբաթներ առաջ, էլի փռված էր երկաթե սեղանիկին, զառերն իրենց վեց աչքերով հայացք էին գցում ու չէին հասկանում ինչից են խռովել տղերքը:

Եվս մի քանի օր անցավ, Վաղոն հայտնեց, որ ինքն էլ է որոշում կայացրել, բայց Անդոն խնդրեց-պաղատեց:

- Չէ՛, դու քանի տարեկա՞ն ես, զինվոր դառնալուց դեռ երկու ամիս ունես: Մորդ միակ տղես ես, իմանա, սիրտը կձաքի: Տուն գնա, մորդ սփոփիր, ես գիտեմ՝ ինչ կանեմ:

- Անդո ախպեր, ի՞նչ պիտի անես:

Անդոն երազում էր օդաչու դառնալ, մարդկանց երկրե երկիր տեղափոխել, օդաչուական համազգեստ կրել, նոր աշխարհներ տեսնել, բայց չէր կարելի: Ինամյա Անդրանիկի մոտ էպիլեպսիա էին հայտնաբերել, տանը քառս էր, հայրը պար-



պում էր շքերի պարունակությունն ու զայրույթը թափում կնոջ վրա, կինն իր հերթին մեղադրում էր խմիչքի հանդեպ ոչ անտարբեր ամուսնուն, հետո երկուսով սկսում էին հիշել մեկը մյուսի նախնիներին, մեղադրանքները անեծքի ու լուտանքի հետ խառնվում, ուրվականների պես սավառնում էին տնով մեկ, ապա մարմին առած հայտնվում փոքրիկ Անդոյի մղձավանջ-երազներում: Միայն մեկ ու կես տարով մեծ եղբայրն էր, որ հայրաբար փորձում էր փոքր եղբորը հեռու պահել գորշադեմ իրականությունից:

Արքիմեդը, այդպես էր կնքվել դասընկերների կողմից Անդրանիկը, լավ էր հասկանում թվերի լեզուն, կարողանում դրանց հաշտեցնել ու լուծել անլուծելի թվացող խնդիրները: Բոլորի աչքի լույսն էր, քանի որ մաթեմատիկայի ստուգողականանի ժամանակ, թե պատահամբ բացակայեր, դասարանի զգալի մասը հաստատ կխորտակվեր ուսուցչուհու ուղղումների ու արդյունքում դրված ոչ ցանկալի նիշերի պատճառով:

Անդրանիկը որքան մեծանում էր, ինքնաթիռն ավելի ու ավելի հեռու էր բարձրանում՝ թաքնվելով ձերմակագեղմ ամպերի մեջ:

Հորը տարավ ակոհուլը, մայրը դարձավ դյուրագրգիռ, սկսեց ավելի շատ սիրել մեծ տղային, իսկ Անդոյին՝ խղձալ:

- Մոռացել ես, որ հիվանդ ես, ընկերներիդ բացատրիր, որ ծամփորդել քեզ չի կարելի, իմացել եմ՝ Լալայի աղջկան ես սիրահարվել, արհամարում ես նոպաներդ, թաղով մեկ ինձ խայտառակ ես անում, գնա եղբորդ կողքին ծեփագործի աշակերտ եղիր, ուրիշ բան չասես էլ, քեզ չի կարելի:

- Իսկ եթե փորձեմ բուժվել, բոլորը ինչ ասես անում են, իսկ ես...

- Դու բոլորը չես...

Հետո կանացի անզորության դրսևորումներ՝ լացեր,

գգվանքներ, ամպերի միջից մարդկությանը հետևողին ուղղված միգուցե տեղին, կամ անտեղի մեղադրանքներ, հետո ապաշխարանք, ապա կարեկցանք ու մթության գիրկը գլորված լացադադար՝ ութ ժամվա տևողությամբ:

Փոքրիկ, հուշերով լցված մի արկղից դուրս են գալիս ջահել հայրն ու մայրը, փոքրիկ, բայց իրենից մեծ ու խոհունակ եղբայրը, ինքը՝ տարբեր տարիներին՝ ժպտացող, մտածկոտ, կիթառը ձեռքին, բակում՝ նարդի խաղալիս: Ճմրթված մի թուղթ ևս այս տուփում է ապրում: Անդոն վախենում է բացել, բայց ձեռքերն իրենցն անում են: «Ների՛ր, ամուսնանում եմ»:

Նազիկի ձեռագիրն է, տառերից մի քանիսն էլ հասցրել էր թրջել ու լղոզել արցունքի կաթիլաջրով: Հիշեց, որոշել էր փախցնել Նազիկին, տանել հեռու մի վայր, ինքն էլ դեռ հստակ չգիտեր՝ ուր, բայց այնտեղ, ուր իր մայրը չէր ամաչի հիվանդոտ տղայի անսպասելի նուպաների պատճառով, զոքանչը խեթ-խեթ նայվածքով չէր ապտակի՝ վախենալով դեռ չծնված թոռների հնարավոր հիվանդությունից, հարևանները չէին ծածաղի սիրուն Նազիկի վրա, որ առողջ տղաներին թողել ու նախրի մեջ ...

Խոստացել էին վաղ առավոտյան փախչել, բայց գիշերը Անդոն զանգեց, խնդրեց, որ Նազիկը մի քիչ էլ համբերի, որ մայրը վատառողջ է, իմանա, չի ների, երկուսին էլ կանիծի, կուժն ու կուլան մեծ եղբոր գլխին կկոտրվի: Անցավ վեց ամիս ու երեք օր: Անդոն վստահ էր՝ սիրած աղջիկը կսպասի: Չէ՞ որ սերն անտեսանելի նրբաթելերով մարդկանց մեկմեկու կապկպել, ժամանակն իր ուզածի պես ձկել գիտի, սակայն վեց ամիս ու երեք օր անց ճմրթված թղթիկի մեջ թաքնված տառերը ձանկոռտեցին հսկա Անդոյի դյուրաբեկ հոգին:

Կափարիչը շրխկոցով փակվեց անցյալից փչող սառը քամիների ուժգին հոսանքից, արկղը պահարան մտավ, Ան-



դոն հազնվեց սովորականից երկար, վերցրեց ծամպուկը, երկար նայեց իրեն հայելու միջից հետևող փոքր-ինչ հոգնած, խոժոռաղեմ, տեղ-տեղ ձերմակած մազերով, ածելին մի քանի օր չկպած ասես անծանոթ տղամարդու խորդուբորդ դեմքին:

Ննջարան խուժեց մեծ եղբայրը, ասաց, որ մեծն այսուհետ ինքը չէ, Անդոն է, Անդրանիկը, որ լռեցնելով հիվանդությունը գնում է տղքերի կողքին մարտնչելու, իր տունն ու տեղը պաշտպանելու: Եկավ նաև հարսիկը, գրկախառնվեց, օրհնեց, մանուշակահյուս փոքրիկ աղջիկները սիրելի հորեղբորը փոքրիկ փայտե խաչ, ձերմակ թաշկինակ նվիրեցին ու արդեն սկսեցին կարոտել իրենց ընտանիքի պաշտպանին, ազգի հերոսին:

Անդոն եղբորն ասաց, որ նախքան գնալը ուզում է Վաղոյին էլ տեսնել, վստահ լինել, որ խելոք կսպասի թաղի դեռևս կենդանի մնացած ավագ ընկերներին, բայց եղբայրը պատմեց, որ երկրորդն օրն է, ինչ տղան ռազմաձակատ է մեկնել: Անասելի թախիծ պարուրեց տխրաղեմ հսկային, բայց հավատում էր Վաղոն հավաք է, խելամիտ, ուշադիր, տղերքն էլ կողքին են, մնում է ինքն էլ տեղ հասնի:

Ոչ միայն քայլը, այլև մտքերն էին ծանրացել: Արդեն պատկերացնում էր՝ ո՞նց է հասնում առաջնագիծ, քանի՞ բաշիբոզով է սուրբ հողից շարտում, ո՞նց են ոգևորվում ու իրենով հպարտանում ընկերները, լրագրողներն էլ կգան, հանգստի կես րոպեն տեսախցիկի մեջ կխցկեն: Գուցե Նազիկն էլ տեսնի, ամուսնուց, երեխաներից գաղտնի արցունք թափի, ափսոսա ու հպարտանա: Հիվանդությունն էլ, նոպաներն էլ կշարտի սահմանից այն կողմ, վերջապես ցույց կտա, որ այս տարիքում է սկսվում իրական, լիաբովանդակ կյանքը: Գուցե վերստին հավատա ինքն իրեն, պետությունն էլ հավատա ազգի ազնիվ զավակին, ապրելու նոր հնարավորություն ընձեռի, ու այդժամ գուցե նա համարձակվի ամուսնանալ, սերունդ էլ տա:

Չնկատեց էլ ոնց հասավ զինկոմիսարիատ, խնդրեց, որ թույլ տան անհապաղ մեկնել առաջնագիծ, կատարել այն գործողությունները, որոնք կպահանջվեն իրենից:

- Աչքներս լույս, հաղթանակը մերն ա, էլ կովի կարիք չկա:

Միանգամից չհասկանալով զինվորականի խոսքերը՝ Անդոն շարունակեց:

- Ո՞նց, այսինքն թույլ չե՞ք տալիս:

- Ա՛յ ախպեր, գլուխդ ծարավե՛լ ա, ասում եմ պատերազմը պրծավ, հաղթել ենք, տասը թույլ ա արդեն: Գնա երեխեքիդ մոտ, հաստատ սպասում են...



ԿՈՆՅԵՐՏ՝ ՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Կլոր, փայտե ծանր հոգնած ոտքերով, դար տեսած սեղանը նորից զարթնում է, նրա գլխին ամեն օր, ա՛յ այսպես, ճիշտ ժամը յոթին, ասես առաստաղից վայր է ընկնում դեռ քնած, երեսը տեղ-տեղ ձմրթած, կաթնամորթ սփռոցը: Սեղանի հարթակին է կանգնում եռման ջրից փքված փորով ինքնատեղ, իրենց տեղն են զբաղեցնում քիչ առաջ ծառից քաղված կարմրաթուշ որբացած խնձորիկները, թերխաշ ձվերը, շրխկում են վաղուց ձերմակությունը կորցրած, խազ-կնձիռներով, բաց կապույտ եզրագծերով ափսեները՝ տիկին Բելլայի նախապատերազմյան՝ մորից հասած օժիտը...

- Pa-pи-тeт,- առիթը բաց չի թողնում ամեն անգամ ընտանիքի անդամներին զգուշացնելու, որ ուշադիր ու նրբանկատ վարվեն դրանց հետ: Տիկին Բելլայի ընտանիքի անդամները շատ չեն. ամուսինն է, տան հայրը՝ Կառլենը՝ հսկա, շաքար-բամբակ մազերով, փղոսկրե ցցված ատամներով, խոժոռ դեմքով, տան ամբողջ թթվածինը կլանող ռունգերով, ի հեճուկս բրոունյան շարժման մեջ գտնվող կնոջը, նա, իր վանդակավոր փափուկ հողաթափերը հատակից չկտրելով, քստացնելով, տեղափոխվում է տան մի անկյունից մյուսը: Ա՛խ, երբեմն թվում է՝ 180 աստիճանով գլուխը կպտտի, աչքերով կշանթահարի, կգոռա, երբ կինն անվերջ ցուցումներ է տալիս, բայց չէ՛, համատեղ կյանքի հիսուն տարիների ընթացքում նա միմիայն կարողացավ տիրապետել այս հայացքին, կնոջ կարգադրություններին ու գոռգոռոնցերին ի պատասխան քթի տակ մրթմրթալ, սևսպիտակ էկրանից տուն ներս թողնել բեղավոր զվարթախոս տխամարդուն, ով չգիտես որտեղից քսան տարի անընդմեջ նվերներ է բաժանում ոչ պակաս կենսախինդ ու հրաշքների հավատացող հյուրերին: Այդժամ Կառլենի հարթաշուրթ բերա-



ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>ՄԱՐԴԸ՝ ԹԵՐԱ-ԿՂԶԻ (Արմեն Ավանեսյան)</i>	3
ԶԱՌԵՐ՝ ԳՐԱՆԻՏԻ ՎՐԱ	7
ԿՈՆՅԵՐՏ՝ ՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ	16
ՄԱՆԿԱԳԻՐԸ	25
«O, Druidi»	35
ՕՐԻՈՐԴ ԶԱԲԵԼԸ	46
ՌԵՊՈՐՏԱԺՆԵՐ ԲԵՐՄՈՒԴՅԱՆ ԵՌԱՆԿՅՈՒՆՈՒՅ	53
ՍՈՆԱՏ՝ ՍՈՆԻԿԻ ՀԱՄԱՐ	74
ԹԵՐԱ-ԿՂԶԻ	81
ՎՏԱՆԳԱՎՈՐ ԿԱՊԵՐ	88
ԵՐԿՈՒ ՀԱՅԿԵՐԻ ՄԻՋԵՎ	96
«ԱՆՏՈՆԻՈՒ»	107
ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈԳՈՒՄ	116



ՍԱԹԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ԹԵՐԱ-ԿՂԶԻ

Պատմվածքներ

САТИ ОВАКИМЯН
ПОЛУ-ОСТРОВ

Рассказы

*Խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Ձևավորումը՝ Արմինե Քոչարյանի
Լուսանկարը՝ Տիգրան Դուկասյանի
Ծապիկը՝ Հայկ Սայադյանի*

Չափսը՝ 60x84 1/16
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ² 1.5 ծ.կ.
Ծավալը՝ 8.0 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 200
Տառատեսակը՝ *Ghabuzian Tigran*
Գինը պայմանագրային



ИЗДАТЕЛЬСТВО **АРМАВ**

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.
հեռ.՝ 34-73-35
էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.
тел.՝ +374-10-34-73-35
Email: armav-hrat@mail.ru



«Մագաղաթ» տպագրատուն, Սահանդյան 33
Հեռ.՝ (+374 91) 46 09 72
(+374 93) 20 71 86
էլ-փոստ՝ magaghatprint@gmail.com